Նյութում տեղ գտած կարծիքները և ձևակերպումները
պատկանում են հեղինակին և կարող են չհամընկնել IKV Pax Christi
կազմակերպության մոտեցումների և ընկալումների հետ:

Պատրաստված է «Խաղաղության երկխոսություն»
հասարակական կազմակերպության «Անվտանգ զինվոր՝
ապահով Հայաստանին» ծրագրի շրջանակներում, որն
իրականացվում է նիդեռլանդական IKV Pax Christi
կազմակերպության աջակցությամբ:

# ՄԻԼԻՏԱՐԻԱՐԽԱՏ

Հեղինակ՝ Էդգար Խաչատրյան
Խմբագիր՝ Վահագն Անտոնյան

© Խաղաղության երկխոսություն, Վանաձոր, 2013թ.:
http://www.peacedialogue.am

Նյութում տեղ գտած կարծիքները և ձևակերպումները
պատկանում են հեղինակին և կարող են չհամընկնել IKV Pax Christi
կազմակերպության մոտեցումների և ընկալումների հետ:

Պատրաստված է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Անվտանգ զինվոր՝ ապահով Հայաստանին» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է նիդեռլանդական IKV Pax Christi կազմակերպության աջակցությամբ:

# ՄԻԼԻՏԱՐԻԱՐԽԱՏ

Հեղինակ՝ Էդգար Խաչատրյան
Խմբագիր՝ Վահագն Անտոնյան

## Բովանդակություն

Նախաբան 5

Ի՞նչ է միլիտարիզացիան 6

Աշխարհաքաղաքական հարթություն 8

Քաղաքական հարթություն 12

Տնտեսական հարթություն 17

Միլիտարիզացիա և հասարակություն 19

Վերջաբան 23

© Խաղաղության երկխոսություն, Վանաձոր, 2013թ.:
http://www.peacedialogue.am

# Նախաբան

«Համարո՞ւմ եք արդյոք Հայաստանը միլիտարիզացված պետություն»... Հայաստանում բնակվող շարքային քաղաքացուն ուղղած այս հարցին դուք հազիվ թե ստանաք միանշանակ «այո» կամ «ոչ» պատասխան: Մեծ հավանականություն կա, որ այս հասկացությանը քիչ թե շատ ծանոթ, կամ դրա բովանդակությունը իրականում գիտակցող մարդկանցից այս հարցին ի պատասխան կլսեք «**Ոչ ավելի, քան՝ հարևան Ադրբեջանը և Թուրքիան, կամ ԱՄՆ-ն ու Ռուսաստանը**»: Հնարավոր է՝ պատասխանեն. «**Այո, բայց մի՞թե մենք այլընտրանքի հնարավորություն ունենք, մանավանդ, հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը, կամ տարածաշրջանում ընթացող քաղաքական գործընթացները**»:

Եթե ապրում եք Հայաստանում, կամ երբևէ այցելել եք, ապա ամենօրյա թոհուբոհի մեջ հավանաբար ուշադրություն չեք էլ դարձրել թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում զինվորական համազգեստով շրջող կանանց և տղամարդկանց վրա, որոնք, կարծես, հայաստանյան առօրյայի անբաժանելի մասն են դարձել: Եթե շատ երկրներում նման պատկեր առօրյայում գրեթե անհնար է տեսնել, բացառությամբ, ասենք, որևէ երկրի՝ որևէ համապետական նշանակություն ունեցող տոնախմբության կապակցությամբ կազմակերպված շքերթների կամ երթերի, Հայաստանում դա ամենևին էլ արտասովոր պատկեր չէ ամենօրյա վազվզոցի մեջ զինվորական համազգեստավորներին անգամ չնկատող քաղաքացիների համար: Հազիվ թե գտնեք մեկ հայ, ով անհանգստացած լինի այս երևույթի պատճառով, կամ դրա մասին նույնիսկ մտահոգվելու անհրաժեշտություն կգտնի, մանավանդ՝ Հայաստանում օրեցօր բազմապատկվող սոցիալական, տնտեսական, կամ քաղաքական այլ խնդիրների ֆոնի վրա: Այստեղ, մեղմ ասած, բոլորը չեն, որ փորձ կկատարեն քննադատորեն դիտարկել զինվորական համազգեստով շրջող մարդկանց ֆենոմենը, կամ զուգահեռներ կփնտրեն իրենց երեխաներին՝ աղջիկներին և տղաներին զինվորական համազգեստով տեսնելիս լայն ժպտացող և հոգու խորքում հրճվող ընտանիքների և երկրի ռազմականացման խնդիրների միջև:

Ի վերջո, հանդիսանո՞ւմ է արդյոք ներկայիս Հայաստանը ռազմականացված երկիր, եթե այո, ապա որո՞նք են այն չափորոշիչները, որ հնարավորություն կտան մեզ նման եզրահանգման գալու: Եթե այո, ապա ինչպիսի՞ն է հասարակական, մշակութային և քաղաքական ռազմականացված կառուցվածքի ազդեցությունը շարքային քաղաքացու կամ նրա աշխարհայացքի ձևավորման վրա: Եթե այո, ապա ի՞նչ է շահում և ի՞նչ է կորցնում երևույթի առկայության պարագայում պետությունը և նրա քաղաքացիները: Այս հարցերին քիչ թե շատ տրամաբանական պատասխաններ գտնելուն է ուղղված սույն վերլուծությունը:

# Ի՞նչ է միլիտարիզացիան

Նախ փորձենք հստակեցնել, թե ի՞նչ ենք հատկապես ենթադրում ռազմականացում կամ միլիտարիզացիա հասկացությունների տակ: Ժամանակակից աշխարհում միլիտարիզացիա (**militarisation**) տերմինը խորհրդանշում է երկրում ռազմականացման՝ միլիտարիզմի[1] նկատմամբ հասարակական պահանջարկ ձևավորող և նրան սպասարկող գաղափարախոսությունը: Ըստ էության, սա մի գաղափարախոսություն է, որը մոբիլիզացնում և պատրաստում է հասարակությանը, որպեսզի այն ինքնակազմակերպվի՝ իրական կամ մտացածին պատերազմական իրավաճակին կամ հնարավոր բռնության դրսևորումներին դիմակայելու համար: Մեծ առումով, դրա հիմքում ընկած է իշխանությունների կամ հասարակության ձգտումն առ այն, որ երկիրը պետք է ունենա հզոր ռազմական կարողություններ և պատրաստ լինի ագրեսիվորեն օգտագործելու այն՝ ի նպաստ ազգային շահի:

Շատ դեպքերում այս գաղափարախոսությունը իր մեջ ներառում է զինվորական դասի հերոսացումը կամ իդեալականացումը և զինվորականների, զինված ուժերի դոմինանտությունը կամ վճռական դերակատարությունը պետական կառավարման և քաղաքականության մշակման գործընթացներում:

Թվում է, ի՞նչ վատ բան կա, անգամ, եթե ինչ-որ բան միլիտարիզացված է: Պետք է նշել, սակայն, որ իբրև երևույթ, միլիտարիզացիան տարբեր մակարդակներում իր բազմաթիվ ոչ դրական դրսևորումներն է ունենում պետության հասարակական և քաղաքական կառուցվածքի մաս կազմող զանազան ասպեկտներում և հարաբերություններում:

**Միլիտարիզացված հասարակություններում կառավարողներն ու նրանց աջակիցները վեր են դասվում օրենքից: Հենց որ առաջանում է նմանօրինակ մի կաստա, ում համար օրենքը չի գործում, այն՝ օրենքը, սկսում է աստիճանաբար կորցնել իր հեղինակությունն ու ուժը: Դա իր հերթին բերում է օրենքից դուրս մարդկանց խմբի մեծացմանը, ավելի ու ավելի մեծ թվով ատյանների կողմից օրենքի տառը ոտնահարվելուն: Կանոնակարգերն ու նորմերը, որոնցով օրենսդրական համակարգն «ապրում» և գործում է, արհամարհված կամ աղավաղված են: Շատ հարթություններում ու ոլորտներում առկա օրենքները սխալ են մեկնաբանվում՝ ի շահ իշխողների, միաժամանակ դաժան օրենքներ են ընդունվում՝ պատժելու համար այլախոհներին:**

1. http://www.watsoninstitute.org/pub/Militarization_Demilitarization_Bibliography.pdf

**Այսինքն, օրենքն այլևս անհատի իրավունքների պաշտպանության գործիքը չէ[2]:**

Բացի այդ, ինչպես Էյնշտեյնն էր ասում, իբր թե ապահովության և խաղաղության նպատակներով ձևավորված մեծ բանակներն, ի վերջո, ազգերին տանում են դեպի իրենց չափերին համապատասխան պատերազմներ. չէ՞ որ չկա այնքան հարուստ ազգություն, որն ի վիճակի է վճարել թե՛ պատերազմի, թե՛ քաղաքակրթության համար: Ընտրություն է պետք կատարել, չենք կարող ունենալ երկուսն էլ:

Այս վերլուծության մեջ համառոտ կշոշափվեն Հայաստանի հասարակական կամ քաղաքական կյանքին առնչություն ունեցող ընդամենը մի քանի հարթությունները՝ միլիտարիզացիայի երևույթի առկայությունը կամ բացակայությունը պարզելու համար: Վերլուծությունն իր առջև խնդիր չի դնում մանրամասն դիտարկելու ներկայացված ոլորտները, այլ ավելի շուտ նպատակ ունի հետաքրքրություն և մոտիվացիա արթնացնելու ավելի լուրջ փորձագիտական խմբերի և  կենտրոնների շրջանում այս խնդիրների վերաբերյալ ավելի մանրամասն ուսումնասիրություններ իրականացնելու և հանրությանը իրենց բացահայտումները ներկայացնելու համար:

Ընթերցողից ակնկալվում է ի մի բերել հոդվածում տեղ գտած որոշ օրինակներ, համադրել, ավելացնել սեփական օրինակները, համեմատել դրանք վերևում ընդգծված միլիտարիզացիայի սահմանման հետ և ընդամենը մասնավոր եզրակացության հանգել՝ Հայաստանում միլիտարիզացիայի երևույթների առկայության կամ բացակայության վերաբերյալ:

2. http://www.hrschool.org/doc/mainfile.php/Lesson60/211/

# Աշխարհաքաղաքական հարթություն

Ընդհանուր առմամբ, այս հարթությունն ուսումնասիրելիս վերլուծության ուշադրության կիզակետում կլինի անվտանգության հիմնախնդիրը: Միլիտարիստական զարգացումները և տենդենցները նկատելու համար կարիք կա պարզաբանելու, թե (Հայաստանի առջև ծառացած վտանգների վերաբերյալ իր ընկալմանը համապատասխան) հասարակությունը որքա՞ն ռազմական պոտենցիալի պահանջ է ներկայացնում սեփական երկրին: Պարզ ասած՝ որքա՞ն ռազմական ներուժ պետք է ունենա երկիրը, որպեսզի բավարար անվտանգության մակարդակ ապահովվի:

Վերջին 20 տարիների ընթացքում Հարավային Կովկասն աշխարհի ամենաանհանգիստ տարածքներից է: Խորհրդային Միության փլուզումից հետո համեմատաբար փոքրիկ այս հողակտորն անընդհատ փորձությունների է ենթարկվում տարբեր էթնո-քաղաքական հակամարտությունների արդյունքում:

Այստեղ այսօր էլ տիրող իրավիճակն այնքան անկայուն է, որ անընդհատ նոր բռնությունների ծագման վտանգ է զգացվում: Ժամանակակից Հարավային Կովկասում ամենապայթյունավտանգն է համարվում նախորդ դարավերջին Լեռնային Ղարաբաղի շուրջ ծագած հակամարտությունը[3]: Չխոսելով արդեն այդ հակամարտության լուծման ուղիների բարդության մասին՝ նշենք միայն, որ դրա աշխարհաքաղաքական հիմքերի չափից դուրս բարդ լինելու պատճառով գոյություն ունեն տարբեր պատկերացումներ, տարբեր մեկնաբանություններ են շրջանառվում անգամ հակամարտության ուղղակի և անուղղակի կողմերի վերաբերյալ:

Իր արևելյան հարևանի՝ Ադրբեջանի հետ Հայաստանի հարաբերությունները սրվել են 1980-ականների վերջերին՝ Լեռնային Ղարաբաղում զինված հակամարտության և Հայաստանի կողմից նրա անկախության հռչակմանը նպաստելու արդյունքում: Ավելի քան 20 տարի է անցել հայ-ադրբեջանական պատերազմից, սակայն խնդիրը մինչ օրս մնում է չլուծված՝ իր հետ բերելով նաև բազմաթիվ այլ քաղաքական, քաղաքացիական, սոցիալ-տնտեսական հետևանքներ:

Հարաբերություններն իր արևմտյան հարևանի՝ Թուրքիայի հետ երկարատև թշնամության հետք են կրում՝ 20-րդ դարի սկզբում Օսմանյան կայսրությունում

3. Ներքոհիշյալ հղման տակ կարելի է գտնել բավականին բազմակողմանի և մանրամասն տեղեկատվություն՝ Լեռնային Ղարաբաղի շուրջ ծագած հակամարտության պատմության, քաղաքական և էթնիկական պատճառների և հետևանքների վերաբերյալ: Սակայն, նյութում կան որոշ բացթողումներ, օրինակ՝ Շուշին ներկայացված է որպես բնիկ ադրբեջանական բնակավայր, չնայած հայերը խորապես համոզված են հակառակում, կամ բերված են ադրբեջանական կողմից պաշտոնապես հրապարակված տվյալներ՝ պատերազմական գործողությունների արդյունքում փախստականների թվի մասին, սակայն չի ներկայացված հայկական տեսակետը՝ ազգությամբ հայ փախստականների վերաբերյալ, ովքեր լքել են Ադրբեջանը:
http://www.coe.int/t/e/com/files/events/2003-04-Youth-conflicts/Nagorno_conflict.asp#P31_1554

հայ ժողովրդի նկատմամբ իրականացված էթնիկական զտումները, ջարդերը՝ միջազգային հանրության կողմից որպես ցեղասպանություն ընդունելուն հայերի հետամուտ լինելու պատճառով: Բացի այդ, Ադրբեջանը և նրա հետ եղբայրական համերաշխություն դրսևորած Թուրքիան Ղարաբաղյան հակամարտության պատճառով շուրջ 20 տարի տնտեսական շրջափակման մեջ են պահում Հայաստանը:

Ավելին, տասնյակ տարիներ ձգվող հակամարտության խաղաղ կարգավորման հնարավորությունը, ներգրավված կողմերի հասարակությունների ընկալմամբ, գրեթե անիրական է: Եվ չնայած 1994թ. կնքված զինադադարի պայմանագրին, մինչ այժմ զինադադարի խախտման արդյունքում բազմաթիվ միջադեպեր են արձանագրվում, որոնք հանգեցնում են նորանոր մարդկային (զինվորական և քաղաքացիական) կորուստների և միմյանց միջև ատելության ու թշնամանքի նոր ալիքի բարձրացմանը:

Նման աշխարհաքաղաքական իրադարձությունների կիզակետում հայտնված երկրի շարքային բնակչի անվտանգության սրված պահանջմունքի արտահայտման փաստը, կարծում ենք, անհիմն չի կարող թվալ որևէ մեկին: Գոյություն ունեցող իրավիճակն, անկասկած, իր խոր հետքն է թողնում երկրի օրինաստեղծ և գործադիր մարմինների, պաշտպանական գերատեսչության պատասխանատուների ընկալումների և գործելակերպի վրա: Համեմելով վերլուծությունը թվային փաստերով՝ հարկ է նշել, որ, օրինակ, վերջին երեք տարիներին Հայաստանի պետական բյուջեից պաշտպանական նպատակներին հատկացվող գումարները[4] կազմում են համապատասխանաբար.

- 2011-ին մոտավորապես 350.465 միլիոն դոլարին համարժեք դրամ (146.2 մլրդ. դրամ),
- 2012-ին մոտավորապես 370.361 միլիոն դոլարին համարժեք դրամ (154.5 մլրդ. դրամ),
- 2013-ին մոտավորապես 438.000 միլիոն դոլարին համարժեք դրամ (182.7 մլրդ. դրամ):

## Միևնույն ժամանակ, երկրի ընդանուր բյուջեն կազմել է.

- 2011-ին մոտավորապես 2.39 միլիարդ դոլարին համարժեք դրամ (1.001 տրլն. դրամ),
- 2012-ին մոտավորապես 2.50 միլիարդ դոլարին համարժեք դրամ (1.044 տրլն. դրամ),
- 2013-ին մոտավորապես 2.76 միլիարդ դոլարին համարժեք դրամ (1.152 տրլն դրամ):

| | Կրթություն և գիտություն (մլրդ. դրամ) | Առողջապահություն (մլրդ. դրամ) | Պաշտպանություն (մլրդ. դրամ) |
|---|---|---|---|
| 2011 | 108.4 | 62.5 | 146.2 |
| 2012 | 105.5 | 65.1 | 154.5 |
| 2013 | 108.3 | 72.0 | 182.7 |

4. Նյութում օգտագործված են ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հրապարակված տվյալները, որոնց դոլարային համարժեքները բերված են ըստ 2013 թ.-ի մայիսի 25–ի համար ֆիքսված դոլարի փոխանակման սակագնի (www.oanda.com)

Վերը ներկայացված աղյուսակում վերջին երեք տարիների ընթացքում պաշտպանական գերատեսչությանը հատկացված գումարների համեմատությունն է ԿԳ, առողջապահության ոլորտներին հատկացված գումարների հետ:

2011թ.-ի համեմատությամբ 2013-ին պետական բյուջեն աճել է 1.15 անգամ, կրթության և գիտության ոլորտին հատկացվող մասը՝ 0, 99 (այսինքն, ըստ էության, նվազել), առողջապահությանը՝ 1.15, իսկ պաշտպանությանը՝ 1.24 անգամ:

Կա՞, արդյոք, նման համամասնություն, թե բյուջեի մոտավորապես քանի տոկոսը կարող է հատկացվել այդ նպատակով, այլ երկրների փորձ, և այլն: Ինչպես նաև, ինչպե՞ս է որոշվում, թե հատկապես ինչքան գումար է հատկացվելու, ում/որ գերատեսչության պահանջի հիման վրա և դեֆիցիտի պայմաններում ինչպե՞ս է որոշվում, թե որ ոլորտից կրճատումների շնորհիվ ՊՆ-ին հատկացվելիքն ապահովվի: Այս հարցերի մեկնաբանության համար դիմեցինք նախկին վարչապետ, տնտեսագետ Հրանտ Բագրատյանին:



**ՀՀ Պաշտպանության նախարարության նորակառույց շենքը**

«Որևէ նորմ չկա: Կա այլ երկրների փորձ: Կա նաև միջազգային ճնշում՝ ՀՆԱ 4%-ից ոչ ավել: Բյուջեի կառուցվածքը որոշում է կառավարությունը: Սրան, բնականաբար, միջամտում է երկրի բարձրագույն ղեկավարությունը: Երբեմն վերլուծություններ են անում, թե այս կամ այն ոլորտի ծախսը ինչպե՞ս կազդի ՀՆԱ-ի վրա: Սա ամենապրոֆեսիոնալ մոտեցումն է: Կոնկրետ այսօրվա կառավարության նման վերլուծություններից տեղյակ չեմ», - ասաց նա:

Ընդամենը մի փոքր խումբ մարդկանց կողմից է երբևիցե բարձրացվել ռազմական բյուջեի թափանցիկությանը վերաբերող խնդիրը[5], որը, սակայն, այդպես էլ մնացել է անպատասխան: Սակայն գրեթե ոչ ոք քննարկման թեմա չի դարձնում ամենապարզ մի հարց. որտեղի՞ց... Ո՞ր ոլորտի գումարների նվազեցման հաշվին են իրականացվել պաշտպանական նպատակներին ուղղված բյուջեի ավելացումները: Ավելին, շատ-շատերն այս փաստը կհամարեն դրական միտում, քանի որ գումարները փաստացի ուղղված են մեր՝ հայերիս անվտանգությունն ապահովելուն:

Վերոհիշյալ փաստերին ի հավելումն բերենք ընդհամենը չափազանց տեսանելի մեկ օրինակ. փորձեք համեմատել միմյանց հետ ՊՆ նորակառույց հսկան ու կառավարական շենքում իրար հետ համեստ հարևանություն անող հայաստանյան այլ գերատեսչություններին պատկանող հարկաբաժինները: Բառերն ավելորդ են:

Վերադառնալով տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական գործընթացներին՝ կարելի է եզրահանգել, որ, կամա թե ակամա, Հայաստանը հարևան Ադրբեջանի հետ հայտնվել է սպառազինությունների մրցավազքում: Այս հարթության մեջ խնդիրը դիտարկելու ընթացքում հասարակության կողմից բերվող հակափաստարկները ներկայացվում են, հիմնականում, հետևյալ ձևակերպումներով.

**Հակափաստարկներ.**

- Ադրբեջանի ռազմական բյուջեն 2012-ին կազմել է մոտ 1.76 միլիարդ դոլար: Արդյո՞ք անհիմն եք համարում ՀՀ պաշտպանության ոլորտին հատկացված գումարների աճը: Ի՞նչ եք առաջարկում, կրճատե՞նք մեր պաշտպանությանն ուղղված բյուջեի մասնաբաժինը:

- Արդյո՞ք պատերազմում հաղթանակ տարած պետության պաշտպանության նախարարության շենքը պետք է խղճուկ տեսք ունենա: Մի՞թե հաղթանակող բանակն արժանի չէ հարմարավետ շենք ունենալուն: Թո՛ղ բոլորը տեսնեն, թե ինչ հզոր բանակ ունենք, թո՛ղ բոլորն իմանան, ում հետ գործ կունենան, եթե հանկարծ աչք դնեն մեր նվաճումների վրա կամ փորձ կատարեն սասանելու մեր անվտանգության հիմքերը:

- Քաղաքացիական փոքրաթիվ խմբերի՝ ՀՀ ՊՆ-ի կողմից բյուջեով նախատեսված ծախսերի վերաբերյալ հասարակությանը հաշվետու լինելու և, առհասարակ, ոլորտի թափանցիկությունն ապահովելու կոչերին ի պատասխան, թե՛ ՊՆ-ում, թե՛ հասարակական ավելի լայն շերտերում շրջանառվող ամենահաճախ հնչող փաստարկն է. մենք պատերազմող երկիր ենք, և թափանցիկության խնդիրն այժմ ամենևին էլ ակտուալ չէ:

5. Armenia: Flying Blind with $400 Million Defense Budget: http://www.eurasianet.org/node/64489

# Քաղաքական հարթություն

Այստեղ կփորձենք դիտարկել, միլիտարիստական գաղափարախոսության առկայության դեպքում, դրա արտացոլումը երկրում ընթացող քաղաքական գործընթացների վրա:

Խնդիրն առավել հիմնավորելու համար հարկ է նախ նշել, որ ՀՀ նախագահի պաշտոնում 2013թ.-ին վերընտրված Ս. Սարգսյանը նախկինում գլխավորել է ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կոմիտեն, այնուհետև՝ ՀՀ Պաշտպանության նախարարությունը, ՀՀ պետական անվտանգության վարչությունը, ՀՀ ազգային անվտանգության նախարարությունը, իսկ այժմ հանդիսանում է ՀՀ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը:

Ըստ էության, ՀՀ-ն ղեկավարվում է Ղարաբաղյան պատերազմի մասնակից, զինվորական մի մարդու կողմից, որը միևնույն ժամանակ հանդիսանում է իշխող «Հանրապետական» կուսակցության նախագահը: Նա նաև ՀՀ շախմատի ֆեդերացիայի նախագահն է, ինչը, սակայն, քիչ կապ ունի վերլուծության հիմնախնդրի հետ:

**Սերժ Սարգսյան. «Եթե մեզ պարտադրեն, մեր հարվածը կլինի կործանարար և վերջինը»**

Ընդհանրապես, նորանկախ պետության կազմավորման և ձևավորման ընթացքում զինվորականները մեծ ներդրում են ունեցել: Նրանք ոչ պակաս էլ հեղինակություն են վայելել, շարունակում են վայելել հասարակության լայն շերտերի համար: Մինչ այսօր պատերազմին մասնակցած սպաները գլխավորում են ՊՆ-ի լիազորության տակ գտնվող կառույցներն ու ենթակառույցները, բանակային կորպուսներն ու զորամասները:

Անգամ օլիգարխներից շատերն անուղղակի առնչություն են ունեցել բանակի և զինվորական անցուդարձի հետ. պնդում են, որ անմիջականորեն մասնակցել են պատերազմական գործողություններին կամ, ամենաքիչը, անձնական միջոցներով սպառազինություն և սննդամթերք են մատակարարել պաշտպանական ջոկատներին:

Նախորդ գլխում շոշափված անվտանգության խնդիրները հաճախ են ծառայեցվում հասարակությանը համոզելու, որ գոյություն ունեցող իշխանությունն է նրա անվտանգության միակ երաշխիքը՝ բառացիորեն հայտարարելով. «**ՀՀԿ-ն մնալու է իշխանության, քանի դեռ Հայաստանին վտանգ է սպառնում: Հանրապետականից բացի, բոլոր քաղաքական ուժերը Ղարաբաղը տալու են՝ բացի ՀՅԴ-ից, ով ռեսուրս չունի**[6]»:

«**Դեպի ապահով Հայաստան**»-ը (To a Secure Armenia) հանդիսանում էր 2013-ին իշխող կուսակցության կողմից առաջադրված նախագահի թեկնածու Ս. Սարգսյանի քարոզչական լոզունգը: Անգամ քարոզչական նյութերը՝ տեսահոլովակներն ու պաստառները, անընդհատ «հիշեցնում» էին հասարակությանը նախագահի թեկնածուի և բանակի միջև եղած սերտ կապի մասին:

Ինչպես ՁՈՒ-ի ֆինանսական հաշվետվողականության մակարդակի բարձրացման նկատմամբ, այդպես էլ՝ այս դեպքում, Հայաստանում ընդամենը փոքրաքանակ քաղաքացիական խմբեր են պահանջ ներկայացնում՝ սահմանափակելու ՁՈՒ մուտքն ու չափից ավելի մեծ ներգրավվածությունը քաղաքացիական ոլորտ: Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն սահմանելու ձգտում ունեցող կամ բանակում մարդու իրավունքների նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորմանն ուղղված գործունեություն իրականացնող քաղաքացիական խմբերը շատ փոքրաքանակ են և բավականին սառը (ավելի ճիշտ՝ թշնամական) վերաբերմունքի են արժանանում հասարակական լայն շերտերի, իշխանական օղակների շրջանում: Նույն այս քաղաքացիական խմբերը բազմիցս են մտահոգություն արտահայտել նոր ընդունված «Արտակարգ դրության պայմաններում բանակի օգտագործման մասին» օրենքի[7] կապակցությամբ կամ գերագույն գլխավոր հրամանատարի՝ «Հանրապետական» կուսակցության նախագահ լինելու պարագայում, զինված ուժերը քաղաքական նպատակներով օգտագործվելու վտանգի վերաբերյալ կամ, ասենք, ՁՈՒ-ում շարունակական բնույթ կրող բռնությունների վերաբերյալ փաստերի, մահացության դեպքերի առնչությամբ:

Հայաստանում հենց այս հիմնախնդիրների կարգավորման ուղղությամբ իրենց ներդրումն են փորձում ունենալ նաև մի շարք միջազգային կազմակերպություններ: ՀՀ ՁՈՒ-ում բարեփոխումների իրականացման համար բարենպաստ պայմաններ ձևավորելու գործում բավականին ակտիվ դերակատարում ունի ԵԱՀԿ-ն, որի երևանյան գրասենյակն աջակցում է Հայաստանում անվտանգության ոլորտի բարեփոխումներին՝ ՀՀ Ազգային ժողովի հետ ստորագրած համագործակցության հուշագրի[8] և ՀՀ պաշտպանության նախարարության հետ 2011թ. համաձայնեցրած

6. http://www.galatv.am/news/view/item_565489.html
7. http://parliament.am/legislation.php?sel=show&ID=4514&lang=arm
8. http://armenpress.am/arm/news/711640/

համագործակցության ծրագրի[9] շրջանակներում, նաև ՆԱՏՕ-ն՝ Հայաստանի հետ իրականացվող «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի»[10] (ԱԳԳԾ) շրջանակներում: Հայաստանը և ՆԱՏՕ-ն համագործակցում են ժողովրդավարական, ինստիտուցիոնալ և ռազմական բարեփոխումների հարցերում:

Սակայն, ներքևում շարադրվող օրինակները, հավանաբար, հնարավորություն կտան պատկերացնելու, թե որքան է այժմ սերտաճած ՀՀ ԶՈՒ-ն քաղաքական կամ, շատ դեպքերում, քաղաքացիական գործընթացների հետ:

**Բանակի ներգրավումն ու մասնակցությունը հետընտրական գործընթացներին եվ մարտի 1-2-ի իրադարձություններին**

2008 թ-ի. մարտի 1-ին նախագահական ընտրություններին հաջորդող ցույցերի ընթացքում ոստիկանության և բանակային ուժերի[11] կողմից ուժի անհամաչափ կիրառման հետևանքով բախումներ տեղի ունեցան իրավապահների և ցուցարարների միջև, որոնք հանգեցրին զանգվածային ձերբակալությունների ու կալանավորումների: Բախումների արդյունքում տաս մարդ զոհվեց (2 ոստիկան և 8 քաղաքացի), ևս երկու հարյուր մարդ տարբեր աստիճանի վնասվածքներ ստացավ:

2013թ.-ի մայիսի 15-ին տեղի ունեցած միջադեպի[12] հետևանքով զոհված ժամկետային զինծառայող Լյուքս Ստեփանյանի հարազատները, ի նշան բողոքի, իրենց սպանված որդուն որոշել էին տեղափոխել Երևան: Երևան-Սևան մայրուղում նրանց ընթացքը խոչընդոտել են ՀՀ ոստիկանության, ռազմական ոստիկանության և զինվորական հատուկ ուժեր, անգամ ՀՀ զինվորական դատախազ Գևորգ Կոստանյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը և ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը՝ նպատակ ունենալով կանխել բողոքի այս ծայրահեղ միջոցը[13]:

Շատ դեպքերում, հենց այս նույն ուժերը օգտագործվում են քաղաքացիական կամ քաղաքական խաղաղ երթերի և ցույցերի մասնակիցներին ցրելու նպատակով:

9. http://www.panarmenian.net/arm/news/87629/
10. http://www.mfa.am/u_files/file/IPAP%202011-2013-ARM-Declassified.pdf
11. http://www.armtimes.com/9103
12. http://www.peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=588&TopicId=7&Language=Arm
13. http://www.galatv.am/news/view/sevan-erevan-lyuqs-stepanyan.html

2012-ին՝ ԱԺ և 2013-ի նախագահական ընտրությունների ժամանակ բազմիցս են արձանագրվել զինվորականների ուղղորդված կամ հրամանով քվեարկություններ:

Շատերից ենք տեղեկացել ևս մի հետաքրքիր երևույթի մասին. ՀՀ բազմաթիվ քաղաքացիների, ում 58 տարին չի լրացել, զինկոմիսարիատում հայտնում են, որ առանց համապատասխան մարմիններին (կարդալ՝ զինկոմիսարիատին) տեղեկացնելու նրանք չեն կարող բացակայել իրենց բնակության վայրից՝ թեկուզ մի քանի օրով: Դե, իսկ թույլտվություն ստանալու համար պարտավոր են զինկոմիսարիատ ներկայացնել ինքնաթիռի կամ այն փոխադրամիջոցի տոմսի պատճեն, որով պատրաստվում են լքել հանրապետությունը: Դեռ ավելին, զինապարտներին մեկ-երկու անգամ զանգահարելուց հետո, զինկոմիսարիատ չներկայանալու դեպքում, զինվորականները գործերը հանձնում են ոստիկանությանը, որն էլ զբաղվում է չներկայացած «օրինազանցների» որոնման աշխատանքներով և, հայտնաբերելով, «բերման ենթարկում» զինկոմիսարիատ:

Հայաստանի Հելսինկյան կոմիտեի նախագահ, իրավապաշտպան Ավետիք Իշխանյանը, ում խնդրել էինք մեկնաբանել իրավիճակը, գտնում է, որ սա ընդամենը իրավական ուժ չունեցող ներքին հրամանի հիման վրա կատարվող ինքնագործունեություն է: Իրավապաշտպանը վստահ էր նաև, որ զինկոմիսարիատը ցանկացած դեպքում պետք է ծանուցագիր ուղարկի: Հեռախոսային զանգերն, ըստ Ա. Իշխանյանի, ոչ իրավական պետության ավանդույթ են. եթե զինկոմիսարիատը որևէ մեկին զորակոչի կամ զորավարժության է կանչում, պարտավոր է ծանուցագիր ուղարկել: Ծանուցագիր չկա՝ ուրեմն մնացած ամեն ինչ ոչ իրավական հիմքերի վրա է, նման գործելաոճն էլ՝ պարզապես կամայականություն[14]:

**Փաստորեն, գոյություն ունեն բազմաթիվ օրինակներ, երբ զինվորական կառույցները, այս կամ այն պատրվակով, տարբեր իրավիճակներում փորձում են միջամտել և վերահսկողություն սահմանել քաղաքացիական գործընթացների վրա: Զինվորականների կողմից վարք ու բարք թելադրելու քաղաքական միտումը վաղուց արդեն թափանցել է նաև քաղաքացիական ոլորտ:**

Իմիջիայլոց, Վանաձոր և Գյումրի քաղաքներում «Խաղաղարար նախաձեռնությունների կովկասյան կենտրոնի» կողմից նախաձեռնված, «Ստոպ»[15] անվանումը կրող ադրբեջանական ֆիլմերի փառատոնի ամենամեծ ընդդիմադիրների մեջ էլ հենց նույն՝ պատերազմի նախկին մասնակիցները, «Երկրապահ» կամավորական ջոկատների անդամներն էին, որոնք գտնում էին, որ ադրբեջանական ֆիլմեր ցուցադրելը անհարգալից դրսևորում է բոլոր նրանց

14. Մանրամասներին կարող եք ծանոթանալ ՉԻՆՎՈՐ ԵՄՔ ՄԵՔ... հոդվածում. (http://www.peacedialogue.am/upload_/2_403/We_are_soldiers_arm.pdf)
15. http://www.peacedialogue.am/armenian/news_more_arm.php?SID=1&AID=487&TopicId=1&Language=Arm

նկատմամբ, ով արյուն է թափել Հայաստանի և ԼՂ անկախացման համար: Միջոցառումը խոչընդոտվեց, դրա դեմ ցույցը վերաճեց ձվերով և քարերով հարձակման՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի (որտեղ կայանալու էր ֆիլմերի դիտումը) վրա:

Ի դեպ՝ մինչ օրս որևէ մեկը պատասխանատվության չի ենթարկվել այս անօրինականությունն իրականացնելու համար:

Ի հակադրություն այս գլխում ներկայացված օրինակների՝ հասարակության մեջ շրջանառվում են.

**Հակափաստարկներ.**

- Բանակի ներգրավումը մարտի 1-ի անկարգությունների վերացման և հիշ-ների այլանդակությունները կանխելու համար միանգամայն ճիշտ էր, սակայն դա պետք էր անել շատ ավելի շուտ:
- Մենք պատերազմական իրավիճակում գտնվող երկիր ենք: Ո՞ւմ եք ուրախացնում, կամ ո՞ւմ ջաղացին եք ջուր լցնում՝ բարձրաձայնելով ՀՀ բանակում առկա խնդիրները:
- Ղարաբաղյան հերոսամարտին մասնակցողների և հայոց բանակի շնորհիվ է, որ ունենք պետություն: Նրանք լավ գիտեն, թե ինչ է հարկավոր մեր երկրին, մենք վստահում ենք նրանց մեր ավտանգությունն ապահովելու ծանր բեռը:
- Մեզ հարկավոր չեն ցնցումներ, միասնականության կորուստը երկրի ներսում հղի է ցանկացած պահին թշնամիների կողմից իրավաճակը իրենց նպատակներին ծառայեցնելու վտանգով:
- Ի՞նչ կարիք կա աղմուկ-աղաղակի, երբ զինկոմիսարիատը պարտադրում է ձեզ տեղեկացնել ձեր ամեն քայլի մասին: Թաքցնելու բա՞ն ունեք: Կարգուկանոնի՞ց եք խուսափում: Միայն մեր մոտ չէ այդպես, այլ ուրիշ երկրներում էլ, օրինակ՝ Ռուսաստանում:

# Տնտեսական հարթություն

Պատերազմի, շրջափակման, Սովետական Միության փլզումից հետո առաջացած տնտեսական կոլապսի, երկրում անկառավարելի մասշտաբների հասած կոռուպցիայի հետևանքով այս դարի սկզբից ծագած տնտեսական անկումը, անկասկած, իր հետքն է թողնում երկրում ընթացող ցանկացած քաղաքական կամ հասարակական զարգացման վրա: Վերադառնալով վերլուծության հիմնախնդրին՝ հարկավոր է նշել, այս պայմաններում ինչն ավելի մեծ ազդեցությունն ունի մյուսի վրա. տնտեսական անկումը՝ երկրի միլիտարիզացման, թե՞ միլիտարիզացված համակարգերը՝ երկրի տնտեսական իրավիճակի վրա:

Ելնելով վերևում նշված աշխարհաքաղաքական և ներքին քաղաքականության զարգացումներից՝ պաշտպանության ոլորտն այժմյան Հայաստանի տնտեսապես ամենակայուն և արագ զարգացող ոլորտն է հանդիսանում: Սկսած կրթաթոշակներից[16] , որոնք այլ, ոչ ռազմական բուհերում, մեղմ ասած, հաճախակի չեն հանդիպում, վերջացրած սոցիալական հիմնախնդիրների լուծման տարբեր հնարավորություններով, ՊՆ-ի կողմից նոր սերունդն անընդհատ հրապուրվում է դեպի ռազմական գործ:

Այդօրինակ նոր նախաձեռնություններից մեկ էլ[17] ամենաթարմն է. ՀՀ Պաշտպանության նախարարությունը բոլոր բուհերի բակալավրիատի ու մագիստրատուրայի վերջին կուրսերի ուսանողներին առաջարկում է պարտադիր զինծառայություն անցնելու նոր տարբերակ. առաջարկի շնորհիվ բոլոր զինծառայողները հնարավորություն կունենան մեկ տարի սովորելու ինչպես բոլոր ուսանողները, այնուհետև անցնել ծառայության՝ հետագայի համար ձեռք բերելով ղեկավարելու հմտություններ:

Ինչպես իր հարցազրույցներից մեկում ասել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետի առաջին տեղակալ, գնդապետ Պողոս Աբրահամյանը. «**Դրանով լուծում եք նաև սոցիալական մի շարք խնդիրներ: Եթե պարտադիր զինծառայությունն ավարտելուց հետո շարունակեք ծառայել զինված ուժերում, ապա կարող եք ընդգրկվել բնակարանի կարիք ունեցողների ցուցակում և Պաշտպանության նախարարությունից բնակարան ստանալ**»:

16. http://www.armtown.com/news/am/ays/20120123/2012012348/
17. http://armenpress.am/arm/news/715300/

Մեծ չափերի հասնող գործազրկության պայմաններում, պաշտպանական ոլորտը եզակիներից է, որ աշխատանքի հնարավորություն է տալիս Հայաստանի՝ հատկապես արական սեռի բնակչությանը: Վերջին 5-6 տարիների ընթացքում կտրուկ աճել է ռազմական բուհերի դիմորդների թիվը[18] , քանի որ, հենց իրենց՝ դիմորդների հավաստմամբ, այս բուհերում սովորելը գրեթե երաշխիք է վաղը բավականին բարձր վարձատրվող, կայուն աշխատանք ունենալու համար, ինչի կարիքն այդքան ունեն ծանր կացության մեջ հայտնված հայ ընտանիքները: Հաշվի առնելով հայաստանյան հասարակության գենդերային կառուցվածքն ու գենդերային դերերի նկատմամբ եղած ընկալումները[19] ՝ հենց տղամարդկանց ուսերին է դրված թե՛ ընտանիքների անդամների ապահովված լինելու, թե՛ նրանց անվտանգության մասին հոգ տանելու խնդիրները: Ուստի, պարզեցնելով օրինակը, ստացվում է, որ հենց իրե՛նց՝ տղամարդկանց շահերից է բխում պաշտպանական ոլորտում նորանոր աշխատատեղերի ստեղծումը:

**Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ**

Այս հարթության մեջ բավականին հետաքրքիր կերպով համընկել են հասարակության անվտանգության և տնտեսական կայունության պահանջարկն ու պետության կողմից (օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով՝ այլընտրանք չունեցող)՝ պաշտպանական ոլորտը անընդհատ զարգացելու առաջարկը:

**Ի հակադրություն այս գլխում ներկայացված օրինակների՝ հասարակության մեջ շրջանառվում են.**

- Ի՞նչ վատ բան կա, որ բանակում զբաղվածություն են գտնում մարդիկ:
- Ի՞նչ վատ բան կա, որ բանակը համալրվում է բարձրագույն կրթություն ունեցող, բանիմաց կադրերով, մանավանդ, հաշվի առնելով օրեցօր ահագնացող աղմուկ-աղաղակն այն մասին, որ սպայական կազմը գրագետ չի, լավ չի վարվում զինվորների հետ և այլն:
- Հայրենիքի պաշտպանն՝ը պետք է ապահովված լինեն, այլ ոչ նրանք, ովքեր նստած են տաքուկ գրասենյակներում:

18. http://www.armtown.com/news/am/azg/20080801/2008080117/
19. http://www.girlfuture.com/greatideas/powerwords/traditional%20gender%20roles/

# Միլիտարիզացիա և հասարակություն

**Մեր զենքը մեր ուժն է, մեր միասնությունը...** [20]

Զինվորականի կերպարի նկատմամբ պաշտամունքի ձևավորումը, ըստ էության, հասարակության միլիտարիզացված լինելու հաջորդ մակարդակն է: Ինչպիսի՞ն են այսօրվա հայ երեխաների և մեծահասակների համար արտադրվող ֆիլմերն ու մուլտֆիլմերը, խաղալիքներն ու գովազդային պաստառները: Ի՞նչ նպատակ են նրանք հետապնդում և ինչպիսի՞ ազդեցություն են ունենում հասարակության և նոր սերունդների դաստիարակման գործում:

Եթե հարց ուղղեք Հայաստանում բնակվող միջին և տարեց սերնդի ներկայացուցիչներին, թե որոնք են, ըստ իրենց, այսօրվա հայկական կինոարտադրության լավագույն օրինակները, ապա առավել հավանական է, որ հնչած պատասխանների մեջ կլսեք նաև «Գեներալի աղջիկը», «Քույրը», «Մի՛ վախեցիր», «Բանակում», «Աննա» հեռուստասերիալների անունները: Ըստ էության, սրանք էժանագին, սերիալային ժանրի մեջ պատրաստված հեռուստանովելներ են: Գրեթե բոլորի մեջ, այս կամ այն կերպ, շոշափվում է զինվորականների, նրանց ընտանիքների, Հայաստանի՝ իր հարևանների հետ ունեցած խնդիրների, հայրենիքի նկատմամբ ունեցած անսահման և անձնուրաց սիրո և թշնամիների կողմից անընդհատ աճող վտանգի թեմաները:

Կենտրոնական հեռուստաալիքներով հեռարձակվող այս ֆիլմերը բավականին մեծ ճանաչում և սեր են վայելում շատ-շատերի մոտ: Անգամ, «Բանակում» սերիալը, որն իր ստեղծման առաջին պահին հանդիսանում էր կոմեդիայի ժանրում նկարահանված, բանակային կյանքի մասին պատմող զավեշտալի դրվագներից բաղկացած մի ֆիլմ, շատ արագ ՊՆ-ի առաջարկությամբ փոխակերպվեց, չնայած կատակերգական, սակայն, ռազմահայրենասիրական ոգի դաստիարակող քարոզչական մի մեխանիզմի: Շատերը գտնում են, որ սա լավ միջոց է հայրենիքը սիրող սերունդ դաստիարակելու համար և հնարավորություն՝ հասարակությանը սթափ պահելու՝ թշնամիների կողմից ցանկացած պահին հնարավոր ագրեսիայն դիմակայելու համար: Ոմանք էլ գտնում են, որ սա հնարավորություն է զինված ուժերի և քաղաքացիների միջև հարաբերությունների զարգացման, բանակի նկատմամբ վստահություն սերմանելու գործընթացներում:

---

20. http://www.hayzinvor.am/20675.html

Սակայն ամեն ինչ այդքան միանշանակ չէ իրականում: Հասարակության լայն շերտերի համար բացարձակ սովորական է դարձել զինվորական համազգեստով մարդկանց անընդհատ ներկայությունն իր կյանքում:
**Այնքան սովորական, ավելի ճիշտ՝ անգամ ցանկալի, որ մարդիկ ընդամենն ուրախությամբ են լցվում իրենց երեխաներին զինվորական համազգեստով տեսնելիս:**

**Ըստ էության, զինվորական համազգեստը գրեթե որևէ կերպ չի կապվում պատերազմի կամ մահվան հետ, այլ, ավելի շուտ, հերոսության, հայրենասիրության կամ քաջության խորհրդանիշի է վերածվել:**

**«Յոգու-մոգու» ելակի յոգուրտ՝ զինվորականի տեսքով**

Այս ամենն այն դեպքում, երբ մի շարք եվրոպական երկրներում չես կարող տեսնել աշխատանքից զինվորական համազգեստով տուն վերադարձող սպայի, զինվորական կերպարների օգտագործմամբ գովազդներ, պաստառներ՝ հանրային վայրերում:

Զավեշտալի կարող է թվալ, բայց միլիտարիզացման միտուներից խուսափելու նպատակով խանութներում գրեթե չես կարող գտնել զենք հիշեցնող խաղալիքներ՝ երեխաների համար: Նույնիսկ ջրային ատրճանակները հնարավորինս քիչ են հիշեցնում իրական ատրճանակ:

**Հայաստանյան իրականության մեջ զինվորի կերպարն ակտիվորեն կուլտիվացվող «իսկական տղամարդու» կերպարի է վերածվել:**

Կարծիք կա, որ Հայաստանի ԶՈՒ-ում ծառայողների միջև գոյություն ունեցող քրեականացված ոչ-կանոնադրական հարաբերությունների հիմքում էլ ընկած է նման «իսկական տղամարդու» գենդերային դերի ընկալումը:

Հայրենիքի ապագա պաշտպան

Աղջիկներն, ասես, ետ չեն ուզում մնալ տղաներից իրենց «հայրենասիրությամբ»

Կարգուկանոնի և սպայական անձնակազմի վերահսկողության բացակայության պայմաններում, ցանկացած ոք, ով չի համապատասխանում կուլտիվացվող և ակտիվորեն քարոզվող անվախ, համարձակ, միշտ ճշտապահ տղամարդու կերպարին, այս ոչ-ֆորմալ հարաբերություններում ստիպված է լինում ստանձնելու «կանացի» դերեր, որոնք հիմք են հանդիսանում հոգեբանական հողի վրա ինքնասպանությունների, բռնությունների և սպանությունների համար:

Այս զինվորական-հերոսական կերպարը քարոզվում է բազմաթիվ միջոցներով զանազան հարթակներում: Առցանց տիրույթում իրենց ժամանակի մեծ մասն անցկացնող երիտասարդների համար էլ նախատեսված է, օրինակ, նույնպես բոլորի սերն ու հարգանքը վայելող, «Քիլ Դիմ [21]» (Kill Dim) զվարճալի մուլտ-նախագիծը:

Այս մուլտֆիլմի սյուժեն գրեթե ոչնչով չի առանձնանում ուսումնասիրության նախորդ էջերում երկար ու բարակ նկարագրված խնդիրների համատեքստից: Կա հայ՝ քաջ, հնարամիտ, բարի, անվախ զինվոր, որին անընդհատ փորձում է դիմակայել հիմար, փնթի, ստրկամիտ և նախանձ ադրբեջանցի անտագոնիստը, որի նենգությունները շարունակաբար անհաջողությամբ են պսակվում՝ սեփական հիմարության պատճառով:

Հազիվ թե գտնեք մի հայ, ով կկարծի, թե մուլտֆիլմի հեղինակները ազգամիջյան ատելություն են քարոզում և, որ հեղինակներին պետք է ենթարկել պատասխանատվության՝ ատելություն ձևավորելու համար, քանի որ.

21. http://killdim.com/arm_index.html

«Քիլ Դիմ» մուլտ-նախագիծ

«Իսկական տղամարդ» հանդիսացող հայրենասեր զինվորի կերպարն ամենուրեք է՝ հեռուստացույցում, գովազդային պաստառներում, խաղալիքներում, խաղերում, դպրոցական դասագրքերում և տանը:

«**...Ադրբեջանում հայերի նկատմամբ ատելությունն օրեցօր ավելի ու ավելի է ուժգնանում: Ի՞նչ է, մենք պետք է սե՞ր քարոզենք**», - կասեն շատերը:

**Մյուս հակափաստարկներն են.**

- Ինչ վերաբերվում է զինվորականներին փողոցում նկատելուն. ինչի՞ պետք է ուշադրություն դարձնել կամ առանձնացնել աշխատանքի գնացող կամ տուն վերադարձող մարդկանց՝ այդ թվում նաև համազգեստավոր սպաներին:
- Ժամկետային զինծառայողների դեպքում. պարզապես արձակուրդի կամ ազատարձակման մեջ գտնվող զինվորները պարտավոր են համազգեստ կրել՝ համազգեստով ներկայանալ զինկոմիսարիատ և այլ:

# Վերջաբան

Չնայած, ինչպես երևում է վերոնշյալից, Հայաստանում այսօր իրոք ձևավորվել է ինքնասպասարկվող մի մեխանիզմ, որը պարարտ հող է պատրաստում նույն կամ համանման ռազմականացված քաղաքական և քաղաքացիական կառուցվածք ունեցող համակարգի վերարտադրման համար, սակայն «**Համարում ե՞ք արդյոք Հայաստանը միլիտարիզացված պետություն**» հարցին, շատ-շատերը կպատասխանեն՝ «**Ո՛չ**»: **Մենք ուղղակի փորձում ենք գոյատևել: Սա, շատերի կարծիքով, Հայաստանի նման փոքր երկրների համար ինքնապահպանման միակ մեխանիզմն է, որից շեղումը հավասարազոր է ինքնաոչնչացման**: Սակայն (դիտել այս հոդվածի առաջին էջում) միլիտարիզացիան ևս կարող է տանել ոչնչացման[22]:

Սույն վերլուծությունը նպատակ չունի ամեն կերպ ապացուցելու, որ Հայաստանը կործանման ճանապարհով է գնում: Պարզապես հնարավորություն է այլ հայացք նետելու իրերի ներկա վիճակին, վերլուծելու բոլորիս հայտնի փաստերը այլ անկյան տակ և սեփական եզրահանգման գալ:

Վերջին դիտողությունը. զանազան (իրենց համար անախորժ կամ ոչ ցանկալի) երևույթներին և մարդկանց պիտակավորելու սիրահարներին տեղեկացնում ենք, որ նյութի պատրաստումը «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության սեփական նախաձեռնությունն է (ինչպես և կազմակերպության բոլոր նախաձեռնությունները), արտահայտում է միմիայն հեղինակների կարծիքներն ու մտահոգությունները և պատվիրված չէ որևէ տեղական, տարածաշրջանային կամ միջազգային կազմակերպության կողմից (կամավոր-չվաճատրվող աշխատանք է):

22. http://www.peacedialogue.am/armenian/activity_more_arm.php?SID=2&AID=511&TopicId=7&Language=Arm

# Ավելացնել սեփական օրինակները.

Պատրաստված է «Խաղաղության երկխոսություն» հասարակական կազմակերպության «Անվտանգ զինվոր՝ ապահով Հայաստանին» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է նիդեռլանդական IKV Pax Christi կազմակերպության աջակցությամբ:

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն,
2002, ք. Վանաձոր; Մյասնիկյան 12, բն. 40,
«ԽԵ» գրասենյակ;
Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am

© Խաղաղության երկխոսություն, Վանաձոր, 2013թ.:
http://www.peacedialogue.am